ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 11.02.2017թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ

20.01.2017 16:00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր հերթական ժողով հրավիրելու մասին» **21.12.2016թ. № 500-Լ որոշմամբ *2017 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10^{00}-ից Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրվել է ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.***

- ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.
- ՀՀ փաստաբանների պալատի ***կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն.***
- ***«Փաստաբանի օր» սահմանելու մասին հարց:***

Հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի 11.02.2017թ. հերթական ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ փաստաբանների պալատի օժանդակության պայմանները և ընթացակարգը կարգավորելու անհրաժեշտությունը, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **20.01.2017թ. № 10-Լ որոշմամբ** հաստատվել է «**Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2017 թվականի փետրվարի 11-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգը**:

Նշված կարգի համաձայն թեկնածուներն իրենց նախընտրական քարոզչության իրականացման համար հավասարության և արդարության սկզբունքի հաշվառմամբ հնարավորություն ունեն օգտվելու ՀՀ փաստաբանների պալատի կայքէջից և դահլիճից, իսկ մարզերի փաստաբանների՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքն իրացնելու համար, փաստաբանների պալատը կապահովի Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերից Երևան քաղաք (քվեարկության անցկացման վայր) տեղափոխումը և հետադարձը դեպի մեկնման վայր՝ կարգով սահմանված պայմաններով:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 20.01.2017թ. № 10-Լ որոշումը

Բեռնել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2017 թվականի փետրվարի 11-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգը

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

23.10.2013«ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ»

22.12.2016ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.01.2017ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ 11.02.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.01.201711.02.2017Թ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԿԱՄ ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 15.01.2017Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })